ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-ԻՆ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎՍՏՐԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 21 նոյեմբերի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ներքին գործերի նախարարի տեղակալ Ա. Սարգսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի հուլիսի 18-ին Վիեննայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ավստրիայի դաշնային կառավարության միջև՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման վերաբերյալ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի սեպտեմբերի 22-ի N 1598-Ա որոշմամբ հավանություն է տվել 2023 թվականի հուլիսի 18-ին Վիեննայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ավստրիայի դաշնային կառավարության միջև՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման վերաբերյալ արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի հոկտեմբերի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ավստրիայի դաշնային կառավարության միջև՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման վերաբերյալ արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2023 թվականի հուլիսի 18-ին Վիեննայում՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Հետընդունման համաձայնագիր) կիրարկումն ապահովելու նպատակով:

2. Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության և Ավստրիայի դաշնային կառավարության (այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Պայմանավորվող կողմ, Կողմ կամ միասին՝ Պայմանավորվող

կողմեր) կողմից անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ավարտի մասին ծանուցումը հետընդունման հարցերով համատեղ կոմիտեի ստանալու օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը:

2023 թվականի հուլիսի 24-ին ավստրիական կողմից ստացվել է ծանուցում՝ Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ընթացակարգերի կատարման մասին:

3. Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության՝ Արձանագրության վավերացման նպատակահարմարության մասին տեղեկանքի համաձայն՝ Համաձայնագրի միջոցով Պայմանավորվող կողմերը նախատեսում են փոխադարձության հիման վրա ստեղծել արագ և արդյունավետ իրավական ընթացակարգեր այն անձանց հայտնաբերման և անվտանգ ու կանոնակարգված վերադարձի համար, որոնք չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում Հայաստանի կամ Եվրոպական միության անդամ պետություններից մեկի տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ բնակվելու համար պահանջները, և դյուրացնելու այդպիսի անձանց տարանցումը՝ համագործակցության ոգով: Համաձայնագիրը հնարավորություն է տալիս ԵՄ անդամ բոլոր պետությունների հետ սահմանել և իրականացնել միասնական ընթացակարգեր՝ Կողմերի տարածքներում առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման հարցերում:

4. Հայաստանի Հանրապետությունում հետընդունումն ու տարանցումն իրականացվում են պետական սահմանի անցման կետ հանդիսացող «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում: Առանձին դեպքերում անձանց հետընդունման և տարանցման համար կարող են օգտագործվել նաև միջազգային երկաթուղային, օդային կամ ավտոմոբիլային փոխադրման համար հաստատված պետական սահմանի անցման կետերը:

5. Հայաստանի Հանրապետությունն Արձանագրությամբ ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

- ապահովել, որ հետընդունման դիմումները, դրանց ստացման հաստատումը, դրանց պատասխանները և այլ հարակից հաղորդագրությունները ներկայացվեն Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի (այսուհետև՝ ՌՀԿԷՀ) կամ, անհրաժեշտության դեպքում, հաղորդակցման այլ անվտանգ միջոցներով՝ ներառյալ էլեկտրոնային միջոցները, որոնցից է, օրինակ, էլեկտրոնային փոստը (հոդված 2, կետ 3),

- երաշխավորել, որ հետընդունման դիմումներ ներկայացնելիս և դրանց պատասխանելիս, պահպանվեն Հետընդունման համաձայնագրի 11-րդ հոդվածում նշված ժամկետները (հոդված 2, կետ 4),

- եթե, որպես Հայցվող Կողմ, հնարավոր չէ ներկայացնել Հետընդունման համաձայնագրի 1-ին և 2-րդ հավելվածներով սահմանված՝ անձը հաստատող փաստաթղթերը, ապահովել, որ ՀՀ իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունն անցկացնի հարցազրույց, համաձայն Հետընդունման համաձայնագրի 9-րդ հոդվածի 3-րդ կետի՝ հնարավորինս շուտ դա համաձայնեցնելով հայցող մարմնի հետ (հոդված 3, կետ 1),

- Հայցվող Կողմի իրավասու մարմնի կողմից հետընդունման համար տրված համաձայնությունն ստանալուց հետո կամ Հետընդունման համաձայնագրի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ որպես Հայցող Կողմ, ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինը Հայցվող Կողմի իրավասու մարմնին ուղարկի գրավոր ծանուցում, որը պարունակում է Արձանագրության 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված տեղեկությունները (հոդված 5, կետ 1),

- որպես Հայցող Կողմ՝ ապահովել, որ տարանցման դիմումը Հայցվող Կողմի իրավասու մարմնին ներկայացվի համաձայն Հետընդունման համաձայնագրին որպես 6-րդ հավելված կցված ձևի, ՌՀԿԷՀ-ի կամ, անհրաժեշտության դեպքում, հաղորդակցման այլ անվտանգ միջոցներով, ներառյալ էլեկտրոնային միջոցները, որոնցից է, օրինակ, էլեկտրոնային փոստը, նախատեսվող տարանցումից առնվազն 10 (տասը) օր առաջ (հոդված 6, կետ 1),

- այն դեպքում, երբ ավստրիական կողմը կրել է ծախսեր, որոնք վերջինս պարտավոր չէր կրել Հետընդունման համաձայնագրի 16-րդ հոդվածի համաձայն, և եթե հայկական կողմը պարտավոր էր կրել այդ ծախսերը, փոխհատուցել այդ

ծախսերը հաշիվ-ապրանքագիրն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում՝ եվրոյով բանկային փոխանցում կատարելով (հոդված 8, կետ 1),

- ապահովել, որ ՀՀ իրավասու մարմիններն ավստրիական կողմի իրավասու մարմինների հետ համագործակցեն Հետընդունման համաձայնագրի և Արձանագրության իրականացման, ինչպես նաև հարակից հարցերի շուրջ (հոդված 10, կետ 1),

- ավստրիական կողմին անգլերենով տրամադրել այն բոլոր փաստաթղթերն ու գրառումները, որոնք Հետընդունման համաձայնագրի և Արձանագրության կիրարկման շրջանակներում պահանջվում է իրավասու մարմիններից միմյանց փոխանցել, ինչպես, օրինակ, Հետընդունման համաձայնագրին կցված ձևերը (հոդված 11, կետ 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի հուլիսի 18-ին Վիեննայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ավստրիայի դաշնային կառավարության միջև՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման վերաբերյալ արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

21 նոյեմբերի 2023 թվականի
ՍԴՈ -1703